ա. Այն, որ օգնություն ենք սպասում Աստծուց, Որը, որպես Ամենակալ, կարող է ամեն ինչ որ կամենա, հետևաբար մեզ էլ կարող է օգնել:

բ. Այն, որ դա սպասում ենք Աստծուց, Որը, որպես Ամենագետ եւ Գերիմաստուն, կատարելապես գիտի ամեն ինչ, հետևաբար լիովին գիտի եւ այն, թե ինչ է անհրաժեշտ մեզնից ամեն մեկի փրկության համար:

գ. Այն, որ սպասում ենք մնա՞ն օգնություն Աստծուց, Որը, որպես անսահման Շնորհատու, անասելի սիրով ընդառաջում է մեզ միշտ պատրաստակամ ժամ առ ժամ, որպես ցուցաբերող ամենայն օգնություն այնքան անհրաժեշտ մեր հոգու պատերազմում հաղթանակ տանելու համար, երբ Նրան ենք փարվում ամուր վստահությամբ:

Եվ մի՞թե հեղափոխում է, որ մեր այս բարի Յովիկը, Որը երեք տարի շրջում էր փնտրում իր կորուսյալ ոչխարը կանգնելով կոկորդիլ աճող ռոժով, գնում էր այնքան դժվարին ու փշուտ արահետներով, իրն էր ողջ արյունը թափեց եւ իր կյանքը տվեց, մի՞թե հեղափոխում էր, որ իմա, երբ էր այս ոչխարը, որ գնում էր իր հետքերով, սիրով դիմում է իրեն եւ ամենայն վստահությամբ օգնության կանչում, էր հալածող չորդի նրան եւ նրան չվերցնի իր աստվածային ուսերին ու չտանի դեպի երկնային իրեշտակների դասերն ու նրանց հետ սրա առիթով չսարքի տոնական հանդիսություն: Եթե մեր Աստվածը, որ մեծազույն խնամքով ու սիրով չի դադարում փնտրել կույր ու խուլ մեղավորին, ինչպես ավետարանական կրթած դարձր, մի՞թե իմա կթողնի նրան, երբ մոլորված ոչխարի պես աղերեսում եւ կանչում է իր Յովիկը: Եվ ո՞վ կհավատի, որ Աստված, Որն անդադար բախում է մարդու սիրտը ցանկանալով ներս մտնել, եւ ընթերթ դուր հետ, ըստ հայտնության խոսքի (Գալտ., Բ, 20), փոխանցելու նրան իր պարզեցնելը, չսի ու չջանկարան ուշք դարձնել նրան, երբ մարդը բացում է իր սիրտը Նրա առաջ եւ կանչում է Նրան:

դ. Գերջապես, առ Աստված ամուր ապավինությունը վերականգնանցելու եւ Նրան անհապաղ օգնության կանչելու չորրորդ միջոցը ինչորդայն մեծ վերանայել է Աստծու կողմից կատարված բոլոր այդպիսի օգնությունների փորձառությունները, որոնք արտացոլված են Սուրբ Գրքերում: Այս բազմաթիվ փորձառություններն առավել հստակորեն ցույց են տալիս, որ Աստծուն ապավինած եւ ոչ մեկ երեք էլ մնացել ամոքող եւ առանց օգնության: «Նայեցեք իհն ազգերին»- կոչում է իմաստուն Սիրաբ., և սեսեք ո՞վ էր, որ հավատաց Տիրոջը եւ ամոքով մնաց» (Սիրաբ., Բ, 10):

Եղբայր իմ, գինված այսպիսի չորս զենքով՝ արիաբար դուրս եկ պայքարի, այն վարիք եռանդով ու ամենայն համոզանքությամբ, որ եթե է տրված հաղթանակ տանել: Բանգի նրանցով դու միանգամայն ծնեք կրեթե կատարյալ ապավինությունն առ Աստված, իսկ այդպիսի ապավինությունն անընդհանր դեպի բեզ կրեթի Աստծո օգնությունը օժտելով ամենահաղթ ուժով: Վերջապես, սրանք քո մեջ խորապես կարմատավորեն լիակատար անվստահությունն սեփական անձիդ հանդեպ: Օգուվելով առիթից դարձնալ ինչեցնում են բեզ այս անվստահության մասին, քանի որ չգիտեն, թե ու՞մ էր պետք իր լինի ինչեցնել այս մասին: Այնքան խորն է արմատավորվել մեր մեջ եւ այնքան ամուր է մեզ կցվել այս ինքնաթուղարում, որպես թե մենք ինչ-որ բան ենք մեզնից երկրայացնում եւ այն էլ ոչ փորք, որը միշտ ծանկնադեպ պարտվում է մեր սրտերում, որպես ինչ-որ մուրթ ու անկատար շարժում, մույնիսկ այն ժամանակ, երբ մենք համոզված ենք, որ ինքնենք մեր հանդեպ ոչ մի վստահություն չունենք եւ ընդհակառակը կատարյալ է մեր ապավինությունն առ Աստված: **Որպեսզի, որքան կարող ես, խուսափես այսպիսի մեծամոտությունից եւ գործես առանց որեւէ ինքնավստահության, այլ սոսկ ապավինությամբ առ Աստված, ամեն անգամ տրամադրվող յայնպես, որ քո անկարողության գիտակցությունն ու զգացումն ճակողորեն Աստծո ամենակարողության հանդեպ մտահալոյթյանը, իսկ այս երկուսը նախորդեն քո ամեն մի գործին:**

Ուսերենից բարձրանց
Բնարիկ Դազարյանը

Արա սրկ. ՆԱԼԶԱԶՅԱՆ

ԳԵՂԱՆԿԱՐ ԽԱՉՎԱՌՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՇԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՄ

Եկեղեցական տոների եւ հանդիսավոր արարողությունների ժամանակ հոգեւորականների երթն ուղեկցվում է ընդցնեւով, ծնծղաներով եւ ծողի վրա բարձրացված խաչվառներով: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի «Ծիսական բառարանի» ընդցը որպէս «ուրախության նկատարան», ծնծղան «ցնծության նշանակ», թափորի առջեւից տարվող խաչը (նաեւ խաչվառ է կոչվում) քրիստոնեական հավատքի խորհրդանշան, եւ թափորի մեջ, «որպէս զարդեր», մյուս խաչվառները հանդիսությունների տոնական տրամադրության եւ բարեպաշտական զգացումների անբաժան մասն են կազմում:

Ստովի վերապրեց երթի մեջ որպէս զարդ գործածվող բազմաթիվ խաչվառների գունագեղ եւ լուսաշող պատկերների ներգործությունը: Բարբախտաբար պահպանվել են տարբեր նյութերով եւ եղանակներով արված այդպիսի մի շարք խաչվառներ: Ամենահին օրինակը Էջմիածնի Վեհարանում պահվող, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» անունով հայտնի, 1448 թվականի ասեղնագործ խաչվառն է, որի նրբաշիւղ մետաքսի մի երեսին ոսկեղեղինին, Գահակալ Քրիստոսն է, մյուսին երկնագույնին, «Սբ. Տրդատ թագավոր, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Դովհիսն» ինքնատիպ հորինվածքով պատկերը:

Գեղարվեստական մեծ արժեք ունեն հատկապէս անհայտ հայ նկարիչների ստեղծած խաչվառները: Դրանք ուղղանկյուն շրջանակի մեջ ամփոփված, ոչ մեծ կտավի երկու երեսին յուղանկրկով արված թեմատիկ պատկերներ են, որոնք բավականին տարածված են եղել 18-19-րդ դարերում: Հայաստանի ազգային պատկերասրահի եկեղեցական գեղանկարչության հավաքածուում պահվում են տասնյակի հասնող այդպիսի խաչվառներ: Դրանք ժամանակին պատկանել են տարբեր եկեղեցիների, այդ թվում Էջմիածնի Սայր տաճարին, Երեւանի Կաթողիկէին եւ Սբ. Դովհաննէսին, Աղթամարի Սբ. Խաչին:

Եկեղեցական գեղանկարչության այս ինքնատիպ գործերն առանձնանում են տեղումնական տեսարանների թեմատիկ բազմազանությամբ՝ իրենց վրա կրելով ժամանակաշրջանի եւ գեղարվեստական միջավայրի ազդեցությունը, նկարիչների ստեղծագործական կարողությունների անմիջական տպավորությունը:

Հանդիսությունների ժամանակ, ի տես հավատացյալ ժողովրդի, խաչվառների ծնունդ ցուցադրվել են հիմնականում Քրիստոսի խաչելության եւ համբարձման տեսարանները, ինչպէս նաեւ հայ միջնադարյան արվեստում լայն տարածում գտած «Աստվածամայրը Մանկան հետ» պատկերները: Բոլոր խաչվառների վրա այս տեսարանները ներկայանում են կանոնականորեն խմբակցությամբ: Այսպէս օրինակ, եթե խաչվառի մի երեսին «Աստվածամայրը Մանկան հետ» տեսարանն է, ապա մյուսին «Խաչելությունն» է պատկերված, որի ավանդական հո-



Անհայտ հայ նկարիչ. 18-րդ դար

րինվածքում երբեմն ավելանում են Քրիստոսի գլխավերեւի տախտակը «Հիսուս Լազարից» թագավոր Յիեց» գրությամբ, արեւի եւ լուսնի մարդադէմ պատկերները, աղանազաններ խաչի ներքեւում խորհրդանշական բովանդակության մանրամասներ, որոնք հանդիպում են եկեղեցական գեղանկարչության այլ գործերում:

Խաչվառների վրա տեսնում ենք Աստվածամոր ավանդական պատկերների զանազան տարբերակները: Մի հորինվածքում նա գործվածքով գրկել է գոգին նստած Մանկանը, մի խաչվառի վրա աղոթքի դիրքով ձեռքերը կրծքին հսկում է Մանկան անխռով ջուլնը, մի այլ նկարում ստնտուկ կերպար է ներկայացնում:

Թեմաների խմբակցության այս օրինաչափությունը խախտվում է Աղթամարի խաչվառի վրա, ուր համատեղվել են «Խաչելություն» եւ «Համբարձում» տեսարանները, որոնց կուռ եւ հավասարակշիռ ավանդական հորինվածքները, պատկերների ներքին տրամադրությամբ ներշնչված կանոնավոր ու գեղեցիկ դիմագծերով կերպարները, նուրբ արծաթագույն կոլորիտը վկայում են 18-րդ դարի անհայտ հայ նկարչի վարպետության ու ճաշակի մասին:

Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում է պահպանվում եզակի մի խաչվառ, որի պատկերները նկիրված են Հայաստանում քրիստոնեության տարածման պատմությանը: 18-րդ դարի անհայտ հայ նկարչի ստեղծած խաչվառի մի երեսին պատկերված է «Գրիգոր Լուսավորիչի տեսիլքը», մյուսին «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին» տեսարանն է: Գրիգոր Լուսավորիչի առջեւ ծնրադիր պատկերված են Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտը եւ գլխաբաց Տրդատ թագավորը, որի գլխավերեւում թեմածող սուրբ հոգուց ճառագող լույսով է ողողված մկրտության խորախորհուրդ արարողությունը: «Գրիգոր Լուսավորիչի տեսիլքը» պատկերի համար գրական հենք է հանդիսացել քրիստոնեական դարձին հաջորդող կրեւորագույն իրադարձության Էջմիածնի Սայր տաճարի հիմնադրման պատմությունը, որը պատկերավոր ձևով նկարագրված է Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ: Հավասարակշիռ հորինվածքում ճարտարապետական մանրամասներով առանձնացող Սայր տաճարի կողքին սուրբ ճգնավորի կերպարով պատկերված են Դովվապետը, նրա գլխավերեւում թեմատարած հրեշտակը եւ տեսիլքի «հրեղեն այրը», որը մատնանշում է մեր «աղոթքի տան» եւ քահանայապետության աթոռի» նկիրագործված տեղը: «Գրիգոր Լուսավորիչի տեսիլքը» պատկերը այս թեմայի լավագույն գեղանկարչական մարմնավորումներից է, որի ազդեցությամբ հետագայում ստեղծվել են այլ նկարներ:

Քննարկի ԱԿՏՈՒՅԱՆ
ՀԱՊԻ զԽՈՒՄՆԱԿԱՆՈՐ

ԶԱՆՏԻ ԱՌԱՌՏ

Կ'իջնէ լոյսի ծիրանին քաղաքի խոնջ ուսերուն.
Զանգերը զի չ'կ'աւերեն մեծ յաղթանակը կեանքի.
Բաց փեղկերէ կը ժպտին նոր ծաղիկներ սարսուռուն,
Եւ ճռուղիներ լոյսի ծիրաններն հեւր կը թռչն:

Փողոցներուն մէջ փակաւ օրը ազար կ'արթննայ.
Հագուարներու երկներանգ կը ծաղկի փուն անդադար.
Եւ հարուար թէ աղբարի նախկին մտայ ղէմքին վրայ
Խաչին անյայտ ցուրերուն կ'իյնայ հրճուանքն հաւասար:

Ժամուրներու խումբին մէջ կ'երթամ գուռ չ'թ, նորոգուած,
Երակներէ կը յորդի սիրոյ ալիքն արիւնաւէր.
Եւ եւ հողին հեւր կը զգամ, ո'վ յարուցեալ Մարդ Աստուած,
Որ Քու հողին կը շրջի զարման այս գով շունչին հեւր:

Խիղճու կապոյր է ախոր երկընքին պէս ու խորի ն.
Աշխարհի դէմ կը լեցուիմ եւ անասիման հիացքով.
Կ'աճի փրկութիւն արիւնի գոհաբերման մեծ կըրքին.
Եւ շրթներն իմ կը ղողան եղբայրութեան համբոյրով:

Այսօր օտար զանգերն իսկ ունին լեզուն Նարեկի.
Հի՛ն, կորսուած չայներով հոգիս հարուար է նորէն.
Աչքերու մէջ կը բացուին մրգաւորաններ հայրենի
Ու փախիքներ մեռելի իմ կարօրիս կը վազեն...

Անա կ'երթամ եւ դարձեալ, նման անմեղ հին փղուն,
Մեր մարտուն մէջ մտնի ծնրադիրն անկապին.
Հայ փառերու խորհուրդով հաղորդելի դարերուն
Եւ բարչրանալ հայրենուս իրաւագոր հաւաքին...

ՄՈՒՇԵՂ Ի ՇԽԱՆ (1914-1990)

ԱՐԻՒՆԱՀՈՍՈՒՄ

Վահցիր, երբ խիղճդ կ'արիւնի,
Վերքը խղճին չունի դարման.
Օր ու գիշեր պիտի բանի,
Մինչեւ հաւրին կեանքի ճամբան:

Ո՛չ որ կրնայ քեզ վշտակցի
Խիղճդ ծակող ցաւին համար.
Խղճի արեան ամէն կաթիլ
Կ'իյնայ ծածուկ եւ աննշմար:

Վահցիր, երբ խիղճդ անբասիր
Մեղապարտի պէս կ'արիւնի
Եւ կը դառնայ փեր ու դախի
Կեանքն արիւննող ամէն ցաւի:

Աչքերուդ դէմ խղճահարի
Պիտի յորդի անըք մարդոց,
Պիտի քալէ գորքը Չարի
Աշխարհին մէջ փառապալկոծ:

Վահցիր, երբ դէմքդ է միշտ ժպտուն,
Բայց կ'արիւնի խիղճդ ներսէն,
Երբ կը կիսես հացը մարդուն,
Բայց արեան համ կու գայ հացէն...

ԵՍ ԵՄԵՐԱՋԸ ԿԵՆԴԱՆԻ

Ե՛ս եմ Երազը կենդանի.
Դարձք չ'իմծի, վերադարձէ՛ք անհամբեր,
Կարօրներուս փարսհալած թռչուններ,
Հաւա՛ք աղբիւրն իրաշքի:

Քանի՛ փարի, օր ու գիշեր,
Ձեր բերնուն ձերնակ սյացքը պայծառ՝
Անհիւրքնկալ լեռներու մէջ քարէ քար
Արիւնցիք կարեւրէր:

Ի՛նչ խենթութիւն ցնորահար՝
Ուրիշէն ներս որոնել զիս յալիւրեան
Ու քալախիլ ու փառապալի ընդունայն
Ինչնէ՛ հեռու, ի՛նչ համար:

Ձի եւ եմ բոցն անմահութեան,
Եւ լոյսերով օձեցի կեանքը փոխյն,
Մինչ փարսը չէր մոլորաբեւ սէրերուն
Դարձաւ շողի՛ մը որսկան:

Ինծի՛ եկէք, օ եկէ՛ք փուն.
Բաւ է որքան դուք կ'ընդհե՛ք անօրի
Կեղծ ու աժան մարգարիտներ արցունքի՛
Պարտեղին մէջ շարերուն:

Ե՛ս եմ սեղանը բերկրանքի
Եւ միայն ե՛ս իմ հոգիս ակունքէն
Կրնամ չեզ փալ անկարելին լուսեղէն
Եւ օրհնութիւնը կեանքի...

Ծ Ա Ղ Կ Ա Ձ Ա Ր Դ

Մ Ա Ն ՈՒ Կ Ն Ե Ր Ի Օ Ր Հ Ն ՈՒ Թ Յ Ա Ն Օ Ր



մեծ ոգեւորութեամբ ու խիճողով է դիմաւորում Նրան:

«Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անվամբ: Խաղաղութիւն երկնքում եւ փառք բարեւոյնքներում», - հրեաներն այսպէս փառաբանեցին Տիրոջ մուտքը Երուսաղեմ: Մինչ այդ էլ Հիսուս Քրիստոս եղել էր Երուսաղեմում, սակայն այս անգամվա մուտքն առանձնակի էր, որովհետեւ առաջին անգամ Նա Երուսաղեմ էր մտնում որ-

պէս Մեսիա, որ նշանակում է Օծյալ, Օծյալ Փրկիչ, որ կամավոր գնում էր չարաւորների: Նույն հրեաները, որ այդ օրը Նրան դիմաւորեցին ցնծութեամբ ու «օվաննա» («օրհնութիւն» Բարձրալիւն) բացականչելով, 5 օր անց այլ բան պիտի աղաղակեին կայսեր՝ Պիղատոսի առջեւ...

Ուրեմն, Ծաղկապարտը Տիրոջ Երուսաղեմ կատարած հաղթական մուտքի տունն է ու բոլորիս ուսուցանում է, թէ ինչպէս պետք է քրիստոնեայն գնա իր նպատակի ճանապարհով:

Այդ ճանապարհին եւ ծաղիկներ կլովեն, եւ փշեր, եւ գովեստներ կլինեն, եւ անարգանք: Անհրաժեշտ է չխաբվել կեղծ գովեստից ու չհուսալքվել նախատիքներից, այլ ընթացաւ հաստատականորեն՝ որոնելով այն իմաստ-նությունը, խաղաղությունն ու փառքը, որոնց աղբյուրն է ինքին Հիսուս Քրիստոսն է:



... Օրհնյալ է նա մանուկները բոլոր, որովհետեւ սրբով մարութիւնն ու Տիրոջ պապկերն ունենա իրենց հոգում...

Աղոյց, շատ վաղոյց (մեր հիշողությունը չի կարող ընդգրկել ժամանակի այդ տեսողությունը), ուրեմն անհիշելի, անընդգրկելի ժամանակներում չկար այն ամենը, ինչ այսօր բխում է, թէ եղել են մշտապես: Չկար ոչինչ, այլ կար միայն բարձր ու անհատ, բարի, անշահիքի բարի Հոգի՝ Աստված. Հոգի, որ Ինքն իրենից էր: Ու շրջում էր Աստծու հոգին՝ Ինքն էր սիրո ու բարության մեջ, շրջում էր, խորհում, գոցեւ բախ-ծում, որովհետեւ Ինքն էր սկիզբը, ու իրենից բացի չկար ոչինչ. Սեր էր՝ ան-պարկապելի, անընդգրկելի, անհուն, բայց միայն Ինքն էր ու երեւի բախծում էր... Ինչո՞ւ: Մեծությունը՞: Գուցէ: Բայց բախծող Սերն էր մեջ ուներ էր փարատում: Նա Արարիչն էր՝ արարող Սեր, ուստի պիտի երկներ: Երկներու համար բավարար էր Նրա կամքը, չէ՞ որ Նա ամենակարող է ու ինչ կամենար՝ պիտի կատարվեր: Իսկ Նրա անսահ-ման ազատ կամքը դրսեւորելու համար բավարար էր Նրա խոսքը:

... Ու Աստված ասաց.
- Թող լույս լինի:
Եվ եղավ լույս: Աստծու արարչագոր-
ծութեան մեջ առաջին լույսն է, որ բարի
է: Սկզբնապես Նա ստեղծել էր երկինքն
ու երկիրը, երկին-
քը, որ հողեւորն է, անտեսանելի աշ-
խարհը ու երկիրը՝
նյութականը, տե-
սանելին, որը սա-
կայն չունի ձեւ ու
անկազմ էր՝ խա-
վարի մեջ: ... Ու
խավարը պիտի

ՍԱՐԻՐ ԳԻՐԲԸ ԶՈ ՍԵՂՍԵՆՆ
Լույս
նայում էր երկնքին ու, երեւի,
գարնանում, ինչպէ՞ս է առաջա-
ցիկ այս անհուն լազուր-վարդա-
յուն փարածքը: Նայում էր եր-
կնքի լուսավորւմներին ու էլի գար-
նանում, աստղերը, արեւը, լուսի-
նը ինչպէ՞ս են առաջացել: Նա-
յում էր շուրջը՝ բույսերին, բույս-
ներին, բոլոր-բոլոր կենդանինե-
րին՝ ցամաքի ու ջրի, բոլոր կեն-
դանի էակներին՝ ինքը թեզ, մարդ
էակին, նայում էր, ու քո հարցա-
սիր հայացքը սահուն անցնում է
աշխիղ հասանելի մեծ ու փոքր ան-
չեռակերպ հրաշքների վրայով, ու
գարնանում էր ինչպէ՞ս, ինչո՞ւ,
որտեղի՞ց... Հարցերն անսպառ են:
Հարցնում էր մեծերին, փոքրերին,
ինքը թեզ, ում պապահի:

Հարց-
նում էր՝ ակնկալելով բացի ծաղ-
կաբոյրի մուրք գունեղանքի ու
հարագի փակ բարձրակ զարդ-
նիքը, ակնկալելով փնտնել փիե-
զերը, ասես, հզոր վրձնահար-
վածներով («կարած»՝ առեղծվա-
ծային («կարպիւրի»... Փափագ
մեծ է՝ երկնի ստունի չափ: Բայց
փնտնել այն, ինչը հասու չէ սովորա-
կան աշխիւ... Տեսնել այն, ինչը տես-
նում ենք անհնար, ու ինչը միաժա-
մանակ մնում է անընթերցելի, անը-
չափելի...

Կա՞ բաղաժախ փնտնելու պարզ ճա-
նապարհ: Ըն առջեւ Սուրբ Գիրքն է:
Բացի ր այն ու կզրկես քո «ինչունե-
րի» պարսպապանների, ու կփարաւորի
քո հարցասիր կրթին:


ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

փարատվել լույսի ստեղծումով: Լույս, որ կյանքի անհրաժեշտ պայմաններից էր: Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը՝ գիշեր:
Այս եղակ արարչագործության առա-
ջին օրը: Որ, որ իր տեսողությամբ տա-
րբեր է մեր ընկալած տեսողությունից: Որ, որ գուցէ դար էր կամ... Ո՞վ գիտի, մարդն ունակ չէ ճանաչելու այն տեսողությունը, որն Աստծու մոտ էր. Աստծու մեկ օրը բանի՞ հազար տարի է...
Երկրորդ օրն Աստված կարգավորեց տարածությունը՝ ստեղծեց տեսանելի եր-
կինքը, որը շրջապատում է մեր երկրա-

գունը: Ստեղծեց օդը՝ կյանքի երկրորդ անհրաժեշտ պայմանը:

Երրորդ օրը, ըստ արարչական մտքի ծրագրի, ժամանակն էր իրարից գատե-
նու ցամաքն ու ջուրը, կարծր հողը, քարն ու ջրային տարածքները՝ գետերը, ծո-
վերն ու լճերը: Ժամանակն էր կյանք պարգեւելու բուսական աշխարհին՝ հս-
կա կանաչ զանգվածներին: Ու եղավ այդպէս:

Չորրորդ օրն Աստված ասաց.
- Թող լուսատուներ լինեն երկնքի տա-
րածքում, որ լուսավորեն երկիրն ու իրա-
րից բաժանեն ցերեկն ու գիշերը:



Ես աղոթում եմ,
եթ քեզ մեկն եմ լի-
նում: Մենուրջան

ՀՈԳՈՒ ԽՈՍԵՐ

մեջ աղոթելիս ավելի անմիջականորեն եմ
գգում Աստծու ներկայությունը: Իմ կարծիքով
աղոթքը միայն այն չէ, որ գրված է, մենք
կարողում ենք, սովորում: Մարդ կարող է
աղոթք չլինանալ, այլ պարզապես Աստծուն դի-
մել իր խոսքերով: Նա կարող է գրուել Աստ-
ծու հետ, խորհողածե՛ք եվ դա կլինի աղոթք,
հոգու աղոթք: Միայն ինչ-որ բան խնդրելու հա-
մար չէ, որ մարդ պիտի աղոթի, աղոթքը նաեւ
հույս է, հավատ: Օրհնակ՝ ես աղոթում եմ, եթ
հույս ուրախ եմ լինում, եթ որեւէ գործ հաջող-
վում է: Իմ աղոթքով շնորհակալություն եմ հա-
ղում Աստծուն: Եթ քեզ աղոթե՛ք ամբողջ
հոգով ու սրտով՝ անկեղծորեն, ես որ ամենա-
կարեւորն է հավատարմ, պիտի վարան լինե՛ք,
որ մեր աղոթքն անպաշտան կլալի:

Ամեն (16 ր.)

Քրիստոս լուսավորում է
մեզ ճանապարհը



Մամվել (10 տ.)

Էջի խմբագիր՝ Ամեն ԱՆՅԱՆ

Մեր գերդաստանի ամենամեծ մարդը պապ է՝
Մամվել Գրիգորյանը: Ինձ Մամվել են անվանել պա-
պիս պապիկը: Նա շատ բարի է ու աշխատասեր
մարդ է: Տունը, որտեղ ապրում եմ, կառույց է պապի, այն աչքին, որի պարու-
ներն ուրում եմ, պապիս փնտնել է:

Մի անգամ պապի հանկարծակի հիվանդացավ: Նա գրեթե կորցրեց փետուր-
ությունը: Պապի իրեն շատ վաղ էր գգում գարնանը: Աշխատանքային այդ ետուգե-
րի ժամանակ նա ոչինչ չէր կարողանում անել: Ես որոշեցի մի բարի գործ կա-
նաչել, որով մի փոքր կթեթեւացնեի պապիս մի՞նչ: Որոշեցի ամեն գարուն մի
խաղողի փունի դնել: Այդ մասին հայտնեցի պապիս: Նրա աչքերը փայլեցին եր-
ջանկությունից: Նա արդյունքում աչքերը հստեց երկինք, կարծես շնորհակալություն
էր հայտնում, որ կա իր գործը շարունակող:
Մամվելների Աստվածաշնչից ես գիտեի, որ Աստված պապիկը բազում հրաշք-
ներ է գործե՛ք վերականգնել կրթչերի փետուրությունը: Ես հավատում եմ, որ այդ-
պիսի մի հրաշք էլ Նա մեզ համար կկատարի, եւ կգա մի գարուն, եթ ես ու
պապս միասին կզննենք խաղողի մի նոր շիկ:

ԲԱՐԻ ԳՈՐԾ Արշագանկ

Մամվել Գրիգորյան
Բ. Արմալիր, թիվ 1 միջն. դպ.

«Սիրո մղորակը» լիաֆույս է, որ Մամվելի փափագն անպայման կիրականանա:
Խնդրանք Մամվելին. մշտապես կապ պահպանիր քո «մղորակի» հետ:



ՆՈՐԱՀԻՄՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

Վաղարշապատի թիվ 7 համարակրթական դպրոցում հիմնվեց «Սբբոց քաղցամառ» կիրակնօրյա վարժարանը՝ թվով 7-րդը ԶԳ-ԶԿ-ին կից գործող վարժարաններից: Դպրոցի 580 աշակերտից մոտ 250-ը (ցուցակագրվել է կամավորության սկզբունքով), հաճախելով վարժարան, հոգեւոր կրթություն ու դաստիարակություն կստանան մասնագիտական վերապատրաստման դասընթացի ավարտում փորձառու ուսուցիչների ավանդմամբ:

Վարժարանի բացումը կալցավ հանդիսավոր միջոցառում: Դպրոցի դահլիճում հաւաքված աշակերտներին, ուսուցիչներին եւ հյուրերին ուղջույնի ու շնորհավորանքի խոսք ասաց ԶԳ-ԶԿ-ի կիրակնօրյա վարժարանների պա-

տասխանատու Վիգեն սրկ. Դազարյանը: Այնուհետեւ ներկայացվեց ԶԳ-ԶԿ-ի պատրաստած համերգային ծրագիրը՝ ջութակահարների համույթի եւ մանկական երգչախմբի մասնակցությամբ:

Դպրոցի տնօրեն Ազատ Տեր-Սարգսյանն իր երախտիքի ու շնորհավորանքի խոսքում մեծապես կարեւորեց վարժարանի հիմնումն ու Հայոց Եկեղեցու դպրոց մուտք գործելն այդ ճանապարհով: Նա հույս հայտնեց, որ քրիստոնեական անհրաժեշտ գիւղիներն ու բարոյականությունը մանուկներին մատուցելով, նրանց հոգուն հաղորդակից դարձնելով՝ թերեւս յուրաքանչյուր դասից հետո էլ ավելի ամրապան սերն ու վատառությունն առ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Վերջում ներկաներին դիմեց ԶԳ-ԶԿ-ի վարիչ-տնօրեն հոգեւոր Ս. Մակար վրդ. Հովհաննիսյանը: Նա Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու շնորհավորանքը փոխանցեց նորահիմն վարժարանի ուսուցիչներին ու սաներին եւ գնահատանքի խոսք ուղղեց դպրոցի տնօրինությանը՝ նշելով, որ Հայոց Եկեղեցին՝ որպէս գուրգուրացող «ծնող», «մայր» իր բոլոր զավակների համար, լավագույնս գիտակցում է կիրակնօրյա վարժարանների անհրաժեշտությունը մեր հոգեւոր կյանքի առաջընթացում:

Դահլիճում ներկա երեխաներն ստացան ԶԳ-ԶԿ-ի հրատարակած բարոգրքի կնիքներ: Դրանք իրենց անուններով ստացան ԶԳ-ԶԿ-ի հրատարակած բարոգրքի կնիքներ: Դրանք իրենց անուններով ստացան ԶԳ-ԶԿ-ի հրատարակած բարոգրքի կնիքներ:

Ամնա Արյան

ՀԱՆԿԻՊՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ապրիլի 11-ին տեղի ունեցավ հանդիպում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության եւ բարոգրքային կենտրոնի վարիչ- տնօրեն Ս. Մակար վարդապետ Հովհաննիսյանի եւ կրթության ու գիտության փոխնախարար Արդա Թոփուզյանի միջեւ: Ըննարկվեցին այսօր արդեն խիստ կարեւոր եւ հրատապ լուծում պահանջող հարցեր, որոնք են՝ մատուց սերունդի հոգեւոր կրթությունը, դպրոցում կրոնի ուսուցումը, երեխաների հետ տարվող բարոյադաստիարակական աշխատանքը: Ձրույցն ավարտվեց հիշյալ խնդիրները կանոնակարգող եւ իրականացնող համատեղ հանձնաժողովի ստեղծելու որոշումով:

Այս հարցերի լուծումը պահանջող հարցեր, որոնք են՝ մատուց սերունդի հոգեւոր կրթությունը, դպրոցում կրոնի ուսուցումը, երեխաների հետ տարվող բարոյադաստիարակական աշխատանքը: Ձրույցն ավարտվեց հիշյալ խնդիրները կանոնակարգող եւ իրականացնող համատեղ հանձնաժողովի ստեղծելու որոշումով:

ԲԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՅ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ԹԵՄՈՒՄ

Հայ Առաքելական Սր. Եկեղեցին Մեծ պահեց չորրորդ շաբաթ օրը մշտն է հանուն հավատքի նահատակված Քառասուն մանկանց հիշատակության տոնը: Այդ օրը եկեղեցիներում կատարվում է նաեւ ձերբորոշիչ արարողություն՝ իր մեջ ունենալով լուսապսակ նահատակների հոգիների մշտավառության գաղափարը:

Քառասուն մանկանց հիշատակության տոնը

նշվեց նաեւ Արագածոտնի թեմի առաջնորդախոս՝ Օշականի Մանկանց եկեղեցում, որտեղ ի հիշատակ նահատակաց, նախագահողությամբ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղիքակա Ս. Վազգեն վրդ. Միրզախանյանի, Սր. Պատարագ մատուցվեց. պատարագիչ՝ Ս. Սկրտիչ քնն. Երանյան:


Արագածոտնի թեմի մամուլ դիվան

ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

Փաբերը (Pub) մեր օրերում ուղիղ խմիչքներ գործածելու համար նախատեսված վայրեր լինելուց բացի, շատ գյուղերում եւ քաղաքներում ընդունված հավաքատեղիներ են համարվում: Անգլիայում գրեթե բոլորը մշտապես հաճախում են երկու կամ երեք փար, որոնք հաճախ ավելի մոտ են նրանց, քան եկեղեցիները: Քրիստոնեականը սկսել են ակտիվորեն քարոզչական գործունեություն տանել փաբերում: Որոշ երաժիշտներ փաբերի հաճախորդներին առաջարկում են հիսուն րոպե ավանդական երաժշտություն՝ փոխարենը հնարավորություն ստանալով տասը րոպե Ավետարան քարոզելու: Ավելի քան երեսունից ցուր փաբ-եկեղեցի է սկսել գործել անցած վեց ամսվա ընթացքում:

Ամերիկյան Բարնա հետազոտական խմբի ավելի քան 4200 երեխայի եւ մեծահասակի հետ

անցկացրած հետազոտությունները ցույց են տվել, որ 14-18 տարեկան դեռահասների մեջ Քրիստոնեականությունը (որտեղից Մովսեսը դիտում էր Ավետյաց երկիրը), Պետրայի եւ Ումմայայի ամայի ամբողջների թվին է ավելացել մի մոր հայտնագործում՝ Հորդանան գետի այն հատվածը, որտեղ, հավանական է, մկրտվեց Հիսուսը: Անցած երեք տարիների ընթացքում Հորդանանում կառուցվել է մոտ 90 նոր հյուրանոց՝ դրանց թիվը հասցնելով մոտ 250-ի: Այս



Վան Սողոմոնյան. «Իմ մոլորակը»

տարի երկիրը սպասում է ավելիքան 2 միլիոն զբոսաշրջիկների:

1943 թվականին Բերեռն Բիքսոնում հայտնաբերվել էին մի մարդու ոսկորներ, որոնք հողին էին հանձնվել քրիստոնեական ծիսակարգով: Զանի որ այդ մարդը ծնվել էր Քրիստոսի ծննդյան 1000 տարի առաջ, հեթանոսական խմբավորումները դրան զայրույթով արձագանքեցին: Շատ հավանական է, որ գերեզմանի վրա կատարվի նաեւ հեթանոսական ծառայություն:

(ըստ բրիտանական «Prophecy Today» ամսագրի նյութերի)

ՎԱՆԻՅ ԹԱԳԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆ

Վանի նահանգի Արճակ գյուղի վերելում՝ Աջմու ճամբարի կողմից ճանապարհին, գյուղի հին գերեզմանատան մոտ էր գտնվում հին, տոհմական Վանից (վանքի) տունը:

Վանից տունը, որ ժամանակին սպասարկելիս էր եղել Ատավաճման հարուստ վանքին, վերջինիս ավերվելուց հետո էլ մնացել էր ոչ միայն մեծահարուստ ու համբավվող, այլեւ նվիրական, որովհետեւ այդ տանը էր գտնվում կարմիր կազմով, մագաղաթյա մի Ավետարան, քերես իսկապես էլ նախկինում վանքապատկան: Ավետարանը համարվում էր հզորագործ ու հրաշագործ:

Տարբեր ժամանակներում սպասարկողներից շատերը հափշտակել էին Ավետարանը, բայց միշտ էլ Վանից տոհմի մարդիկ, մեծ փրկագնով կամ նույնիսկ կյանքը վտանգի ենթարկելով, վերադարձրել էին Ավետարանն ու դրել իր տեղը, այսինքն՝ Վանից թոնրատան միջի մասնում՝ փոքրիկ թմբի վրայի փայտե ին, հասարակ արկղի մեջ, որի բանալին մինչեւ իր մահը գտնվում էր տան ավագի մոտ, ապա նոր մրա որդին էր իրեն իրավունք համարում ձեռք տալու Ավետարանին, իսկ կամայք ձեռք չէին տալիս:

Ավանդություն կար, որ Լենկ-Թեմուրը Վանից բազավոր Ավետարան տարել էր մինչեւ Մամարդանը: Վանից տնից Սարգիս անունով մեկը պարսիկ ախտոնի (մահմեդական հոգեւորական) տարազով հետնել էր Ավետարանին: Նա աշխարհաստանի բարեհաճությանը էր արժանացել մինչեւ այն աստիճան, որ կարողացել էր ազատորեն ելու-մուտ ունենալ այն շենքը, ուր արքայափակված էին եղել բազում ազգերից խլաված գրական արժեքները: Ու մի օր կեղծ ախտոն-արձակի Վանից Սարգիսը գողացել էր Վանից բազավոր Ավետարանն ու Մամարդանից վերադարձել Արճակ:

1896 թ.՝ հայկական ջարդերի ժամանակ, գյուղը կոտորող ու թալանող տասնույթ համալրեական աշխարհներից (քրդական ցեղային կոչում) մի համրիղե (Մոկի կոչմանից) տարել էր այդ Ավետարանը: 1904 թ. նա ինքնակամ բերել էր Վան ու քրդերի հետ սերտ կապ պահպանող վանքից մի հայ իշտանապիրոջ պատվիրել էր Ավետարանը վերադարձնել Արճակ գյուղի այն տունը, որի մոտ մեծ-մեծ քարերով գերեզմանոց կա ու ջրաղաց: Ավետարանի տեղը Վանից Պիտրոս աղան, որ մի ժամանակ մյուրորդ (զավառապետ) էր եղել, այդ ուրախալի օրը երկու կով էր մորթել, Ավետարանը մեղմունով մկրտել տվել, ապա միայն տարել էր տեղը դրել:

ՄԵՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

(«Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», հատ. 8)

ԱՎԱՆԴԱՊԱՏՈՒՄ

Արցախի աշխարհ

ԹԱՐԳԱՄԱՆՅԱՆ ՎԱՆԷ

Գրվում է Գանձակի իսլամական գյուղի մոտ

Հիմնվել է Մեսրոպ Մաշտոցի ժամանակ, երբ նա քարոզել է այս կողմերում: Վանքի բակում կա մի արքայուր: Կամենալով հրաշք ցույց տալ ժողովրդին՝ Մաշտոցը գավազանով խփել է քարին, եւ նրանից ջուր է լիսել:

ԲԱՐԵՎԱՇԱՌ ՈՒՍՏԱՏԵՂԻՆ

Գրվում է Արցախի Վերին Թաղավար գյուղի մոտ

Ատում են, քե հին ժամանակ այստեղ ապրել է մի եպիսկոպոս, եւ ամեն անգամ, երբ նա իր երկար ծոմապահությունից ու ճգնությունից հետո պատարագ էր մատուցում, շրջակայքի ծառերը ողջունի ժամանակ երեք անգամ խոնարհում էին իրենց կատարները եւ իրար կպցնելով՝ ողջուն էին տալիս: Դրանից էլ ուխտատեղին ստացել է Բարեւաճառ անունը:

ՈՍԿԵ ԽԱՉ

Գրվում է Արցախի Աշան գյուղի համրում

Այս հանրում մի կաղնու ծառ է եղել: Այս ծառի վրա երկնքից լույս է իջել: Ատվորտից մինչ ուղ հիշեր այստեղ՝ Նահատակի սարի դիմաց, աղոթել են: Այդ իսկ պատճառով տեղը կոչվել է Ոսկե խաչ:

ԱՎԵՏԱՐԱՆՑ

Գրվում է Շուշուց ոչ հեռու

Վաչագան բազավորը զոջալով, որ ուրացել է քրիստոնեությունը, առանձնացել է այստեղ եւ իր կյանքի մնացած օրերն անց է կացրել Ավետարան կարդալով: Գյուղը կոչվել է Ավետարանոց:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մարկ Սեդր Սուրբ Եջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Եջմիածին Քրիստոնեական դաստիարակության եւ բարոգրքային կենտրոն
Գրանցման վկայական՝ 624, Դասիչ՝ 69333
Գլխավոր խմբագիր՝ Ստեփան Ստամբոլցյան
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ բարոգրքային կենտրոն
Հեռախոս (0+59) 56780
Միջազգային կադրերի հոլումը
«Քրիստոնեայ ճալատանին» պարտադիր է:
Նյութերն ընդունվում են մեքենագիր փոխանով:
ՄԱՅՐ ՄԱՐՈՒՍ. ԷՏՄԱՍԵՆ ՏՊԱՐԱՆ
Ստորագրված է տպագրության 14. 4. 2000 թ.
Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ